



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
 ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 23-Ա

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 04 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Նարեկ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 04 նիստի օրակարգի հետևյալ հարցերը՝

1. /24 -Ա/ Նարեկ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին /Ձեկ. Փ.Հակոբյան/:
2. /25-Ա/ Նարեկ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների կատարողականի մասին/ Ձեկ. Ք.Բեգլարյան/:
3. /26-Ա/ Համայնքային սեփականություն համարվող գյուղ.նշանակության հողամասերի օտարման թույլտվության մասին /Ձեկ. Ա.Հովհաննիսյան/
4. /27-Ա/ Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող Վանի փողոց N30 հասցեում գտնվող գյուղատնտեսական արտադրական հողամասի ուղղակի վաճառքին համաձայնություն տալու մասին /Ձեկ. Փ.Հակոբյան/:

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԴԻՇՈՒԿ ԱՆԴՐԵՅ

ՀԱԿՈՒԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈՒԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru ,
narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 24-Ա

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 06.04.2021 թվականի թիվ ԱՏ-06042021-03-0299 տեղեկանքը և Նարեկ համայնքի ղեկավարի առաջարկությունն այն մասին, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրքերի համաձայն 03-063-0128 և 03-063-0131 կադաստրային ընդհանուր ծածկագրեր ունեցող տարածքներից առանձնացված գյուղ. նշանակության 0,7776 հա հողամասը սխալմամբ հաշվառվել է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն փոխանցված հողամաս՝

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել Նարեկ համայնքի սեփականության իրավունքը 03-063-0128 և 03-063-0131 կադաստրային ընդհանուր ծածկագրերից 0,7776 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն կադաստրային քարտեզից քաղվածքի:
2. Նարեկ համայնքի ղեկավար Գ. Հակոբյանին՝ դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում 03-063-0128 և 03-063-0131 կադաստրային ընդհանուր ծածկագրերից 0,7776 հա մակերեսով հողամասի նկատմամբ Նարեկ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

ԱՎԴԻՇՈՒԿ ԱՆԴՐԵՅ *Կոչմ ԼԼԲ*

ՀԱԿՈՒԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ *Կոչմ ԱԿԿ*

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ *Կոչմ ՍԵՐ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈՒԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Նարեկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Նարեկ, 098435745, narekhamaynq@mail.ru , narek.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին ենթակետով.

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի բյուջեի 2021 թվականի I եռամսյակի եկամուտների կատարողականի մասին և արդյունքները գնահատել բավարար

- 1) Հողի հարկ -172,157 ՀՀ դրամ - 10,76%
- 2) Գույքահարկ փոխադրամիջոց (\$իզ.անձ) - 2496,346 ՀՀ դրամ - 124,82%
- 3) Տեղական տուրքեր - 180,700 ՀՀ դրամ -237,76%
- 4) Գույքի վարձակալությունից եկամուտ - 2545,679 ՀՀ դրամ -120,08%
- 5) Վարչական գանձումներ - 112,952 ՀՀ դրամ- 17,01%
- 6) Հողի իրացումից մուտքեր- 4690,977 ՀՀ դրամ - 469,10%:

Կողմ -3

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԴԻՇՈՒԵՎ ԱՆԴՐԵՅ

Կողմ ՍԻԻ

ՀԱԿՈՒԲՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Կողմ ՍԻԻԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐՈԲ

Կողմ ՍԻԻԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈՒԲՅԱՆ

